№ 243 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 — 1899 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 № 243

ՔՍԱՆԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երեքշաբթի, ամսիս 28-ին, կը կատարվի

ԹԱԴԷՈՍ ՊԱՊԱՆԵԱՆ ԿԻՒՐԵՂԵԱՆԻ

մահվան տարեդարձը. ուստի Վարդուհի Մկրտչեան Կիւրեղեանը խնդրում է ազգականներին եւ ծանօթներին չնորհ բերել հոգեհանգստին՝ Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Պատարագը կը սկսվի ժամի ճիշդ 10-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 11-ին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն շնորհ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաշարժից վնասվածների օգտին. Ախալքալաքի գաւառի ազէտը. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇՆՈՐՀ

Թագաւոր Կայսրը տեղեկանալով, որ երկրաշարժի ազէտից վնասված գիւղերը մնացել են առանց ապաստարանի և կերակրի, Բարձրագոյն հրամայել է ներքին գործերի մինիստրին փոխադրելու Կովկասի իշխան կառավարչապետին յիսուն հազար բուբլի տառապեալներին նախնական օգնութիւն հասցնելու նպատակով։

Դահի բարձրութիւնից ցոյց տուած կարեկցութիւնը խորին երախտագիտութեամբ և մեծ հրճուանքով կը լցնի ազէտի ենթարկված դժբաղդ ազգաբնակութեան սրտերը, որ ստանում է այդպիսով բարոյական մեծ մխիթարութիւն՝ կապված նիւթական նպաստի հետ։

Ուրախութեամբ կարող ենք յայտնել, որ հասարակութեան մէջ նկատվեց համակրելի շարժում դէպի օգնութեան գործը։ Սկսում են գումարներ ժողովվել և դաւառներում։ Բաղուցիները վճռել են իրագործել որբերի ապաստարանի միտքը և այդ նպատակով ժողովել են արդէն տասն հազար բուբլի։

Թիֆլիսի թեմի առաջնորդը կարգադրել է, որ թեմի քահանաները քարոզներ խօսեն և ժողովարարութիւն անեն ամեն տեղ թէ փողով և թէ հագուստեղէնով։

Սակայն անհրաժեշտ է եռանդուն գործունէութիւն։ Ազէտից վնասված ժողովրդին փոքր ի շատէ բաւարար օգնութիւն հասցնելու համար հարկաւոր է մօտ 300,000 բուբլի, մինչդեռ ներկայումս ստացած նպաստները հասնում են 80,000 բուբլու։

Մեր հասարակութիւնը պէտք է ապացուցանի, որ նա կարող է գիտակցաբար վերաբերվել դէպի իր դժբաղդացած մերձաւորի ազէտալի վիճակը և ոտքի վրա դնել մի բուռն ժողովուրդ, որ ենթարկվել է ճակատագրի կատաղի հարուածին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Հասարակութիւնը իր առաջ մի հիանալի դաս ունի։ Մեր հակացողութիւնները արդարութեան, ճշմարտութեան մասին, պէտք է խոստովանել, դեռ բաւական վայրիվերոյ են, հին նախապաշարմունքների ծանր լուծի տակ ենք գտնվում եւ մենք յաճախ վրդովվում ենք, տեսնելով այնպիսի իրողութիւններ, որոնք հակասում են մեր վաղեմի, աւանդական իմաստութիւններին։ Պետերբուրգի նահանգական դատարանում այս քանի օրերում քննվում էր մի քրէական գործ, որ բաւական աղմուկ էր հանել։ Գիւղացի մի աղջիկ ընկնում է հիւսիսային մայրաքաղաքը, թեթեւ կրթութիւն է ստանում, ամուսնանում է մի կոպիտ, կիսագրագէտ արհեստաւորի հետ։ Բայց նա գեղեցիկ կին է եւ սայթաքվում է ուղիղ ճանապարհից, դառնում է երգչուհի զանազան կասկածաւոր գինետներում եւ ճաշարաններում, մի խօսքով իրվում է անբարոյականութեան ցեխի մէջ։ Ամուսինը չահագործում է իր կնոջ այդ դրութիւնը, եւ աւելի շատ փող նրանից կորզելու համար ծեծում է, հալածում է, սպառնում է թէ իր ամուսնական իրաւունքները կը բանեցնէ, այսինքն կը հարկադրէ նրան իր հետ ապրել։ Անոնա Կոնօվալօվա—այդպէս է կնոջ անունը—վերջապէս չէ համբերում եւ մի քանիսների գործակցութեամբ սպանում է իր աղամարդին։ Դատարանում նա խոստովանում է իր յանցանքը, պատմում է սպանութեան մանրամասնութիւնները։ Ըստ երեւոյթին, այլ եւս ոչ մի կասկած չը կայ, որ նա դատապարտվի. այդպէս է տրամադրում օրէնքը, այդպէս ենք կարծում եւ մենք ամենքս։ Բայց երդուեալները արդարացնում են Կոնօվալօվային, եւ ահա մամուլը քննում է թէ որքան արդարացի էր երդուեալների այդ վերաբերմունքը դէպի մի մարդ, որի ձեռքերը թաթախված են մարդկային արեան մէջ։ Եւ պէտք է ասել, որ հասարակական կարծիքի ներկայացուցիչները մեծ մասամբ համերաշխ են երդուեալների հետ։ Նոյն իսկ պահպանողական թերթերը, որոնց համար երդուեալների դատարանը միշտ աչքի փուշ է եղել, համարում են այդ վճիռը գթասրտութեան մի գեղեցիկ օրինակ։ Բայց այդ երեւոյթը մարդկային խղճի եւ արդարադատութեան տեսակէտից շատ գեղեցիկ կերպով բացատրում է իշխան Բարեատինսկի «Сѣверный Курьеръ» լրագրի մէջ։

Չը գիտեմ ինչու—ասում է նա—ինձ այս փիսրուն, երիտասարդ կինը, որը իր թոյլ ձեռքերի մէջ մահ է բռնած, ներկայանում է բիբլիական Յուդիթի նման մի բան, որ սպանում է իր ցեղի թշնամուն։ Հողոփեռնէսը—դա տղամարդ է, տղամարդը առհասարակ, որ արդարացրած ոճրագործ կնոջ ամբողջ կեանքի դահիճն էր. դահիճ նրա ծննդեան—Անոնան մի ապօրէն աղջիկ էր, որին հայրը ճակատագրի կամքին էր թողել. դահիճ նրա պատանեկութեան—Անոնայի խորթ հայրը չուզեց խնամել նրան, համարելով նրա ապրելը իր տան մէջ շատ ծանր. դահիճ նրա երիտասարդութեան—յիշենք Անոնայի ամուսնուն. դահիճ՝ նրա, որպէս կնոջ համար—Անոնան կեղծ ճանապարհի վրա դրվեց եւ անօգնական մնաց... Խստապահանջ չը լինենք դէպի այդ կինը. մի կին, որ փողով ծախում է իրան, ոչ մի բանով վատ չէ այն տղամարդից, որ գնում է նրա մարմինը եւ այս զզուելի վաճառքի հետ այլանդակում է եւ նրա հոգին։ Խստապահանջ չը լինենք դէպի այդ կինը. մարդկային մի էակ, որ ինքնապաշտպանութեան զգացմունքից դրդված նոյն իսկ ոճրագործութեան է հասնում, դեռ արժանի չէ խայտառակութեան կնիքին... Խստապահանջ չը լինենք դէպի այդ կինը. նրան շպրտեցին կեանքի հոսանքների մէջ, չը տալով ոչինչ հրահանգներ, ապրուստի ոչինչ միջոցներ. նա ընկաւ, որպէս զի յանկարծակի բարձրանայ իբրեւ վրէժի ահաւոր ուրուական... Խստապահանջ չը լինենք դէպի այդ կինը. մենք ինքներս նրան դարձրինք այն, ինչ է նա...

Ահա թէ ինչ են ասել երդուեալները հասարակութեան, արդարացնելով նրա հակացողութիւններից, նրա հիմնած կարգերից առաջ եկած զոհին։ Մի զոհ է դա, որին իր պաշտպանութեան տակ առաւ եւ ռուսաց հանճարեղ վիպագրող Տօլստոյ իր «Յարութիւն» վէպի մէջ, որը դեռ այժմ էլ տպագրվում է մաս-մաս, սքանչացնելով ընթերցողներին։ Հանելով հասարակութեան առաջ հէնց այդպիսի հանգամանքների պատճառով ընկած մի կնոջ, Տօլստոյ իր վիթխարի տաղանդի ոյժով ցոյց էր տալիս, որ եթէ անարդար, տմարդի պայմանները այդքան ցեխոտում են կնոջը եւ հասցնում են ոճրագործութեան, դրա համար մեղադրվածների նստարանի վրա պէտք է դնել ոչ թէ զոհին, այլ այն մարդկանց, որոնք նրա անկման եւ խայտառակութեան պատճառ դարձան։ Եւ որքան գեղեցիկ երեւոյթ. մեծ վիպագրողի մտքերը արձագանք են գտնում գործնական կեանքի մէջ, եւ Պետերբուրգի երդուեալները իրանց վճռով հաստատում են, որ այդպիսի վերաբերմունք դէպի ընկած զոհերը համապատասխանում է բարոյական ամենաբարձր հասկացողութեան, որ նա վաղուց պիտի հաստատվէր իբրեւ ճշմարիտ արդարադատութիւն։ Հասարակութիւնը սիրում է մոռանալ տարբական ճշմարտութիւններ իր սեփական վարքի, իր արատների մասին. նա սիրում է արտաքուստ յղկած, կոկած, բայց ներքուստ փարիսեցիութեամբ լի հանդէսներ սարքել արդարութեան բարձր բարոյականութեան անունով. բայց Անոնա Կոնօվալօվա եւ երդուեալները հասկացնում են, որ կայ արդարադատութեան ուրիշ չափ, որ որքան բարձր ու վեհ է, այնքան էլ սթափեցուցիչ է ու խրատական...

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

«Մշակի» անցեալ համարում յայտնել էինք, որ մեր խմբագրատանը կար ժողոված 405 բուբլի երկրաշարժի ազէտից վնասվածների օգտին։ Բացի այդ, ստացել էինք երկու հակ զանազան տեսակ հագուստներ։ Այնուհետեւ ստացանք դարձեալ 995 բուբլի 15 կոպէկ դրամար եւ մի կապոց հագուստեղէն, որ նուիրել են հետեւեալ անձինք. Մկրտիչ Քալանթարեանց փոխադրել է Բաղուից 100 ր., Եղբարք Գէորգեաններ Թիֆլիսում 200 ր., Ալէքսանդր Թառայեանց փոխադրել է Բաղուից 200 ր., Արսէն Կրասիլնիկեան Բաղուից 200 ր., Անդրկասպեան ընկերութիւնը ուղարկել է Բաղուից 100 ր., տիկին Սօֆիա Սելիկեան 20 բուբլի եւ մի հակ հագուստեղէն՝ բաղկացած 75 կտորից, վանեցի մի խումբ պանդուխտներից 17 ր. 40 կ., Յ. Սպենդիարեան 5 ր., չորս պանդուխտ մշակներ 2 ր. 50 կ., Պ. Պետրոսեան 3 ր., Ա. Ստեփանեանց 1 ր., Ա. Եարդուլեանց 10 ր., Ս. Ղամազեանց 5 ր., Ս. Խարազեանց 3 ր., Գ. Մահտեսի-Ստեփանեանց 3 ր. եւ մի ոմն 1 ր.։ Թիֆլիսի Տափի-Թաղի Քամոյեանց ս. Գէորգ եկեղեցու միաբանութիւնը 25 բուբլի, որ տուել են հետեւեալ անձինք՝ Յ. քահ. Մարտիրոսեանց 10 ր., Յ. քահ. Տէր-Պետրոսեանց 5 ր., Յ. քահ. Ճուղուրեանց 2 ր., դպիր Մ. Տէր-Յարութիւնեանց 2 ր., Ղ. Ամիրջանեանց 2 ր., ժամկոչ Մ. Ումրշատեանց եւ գիշերապահներ Ս. Ումրշատեանց եւ Թ. Աբէլեանց 1 ր.։ Բաթումից Մ. Առաքելեան ուղարկել է 5 ր., Ս. Սողոմոնեանի միջոցով Թիֆլիսում 20 ր. 50 կ., որ տուել են հետեւեալ անձինք. տ. Սօֆիա Սելիկեան 3 ր., անյայտ մի անձն 5 ր., Ս. 2 ր., Լ. Տէր-Ղեւոնդեան 1 ր. 50 կ., Ս. Ս., Ա., Ոմն, Թէոս Հայդարեանց, Ն. Տէր-Յակոբեան, Ե. Փիրումեանց, Եղբարք Ա.—մի-մի բուբլի, Գ. Պօքսեան, Леванъ, Մի ոմն, Ս. Կուլեան—50-ական կոպէկ։ Յովհաննէս քահ. Ամիրխանեանցի միջոցով 73 ր. 75 կոպ, որ նուիրել են հետեւեալ անձինք. Եպոր Առաքելեան Մարտիրոսեան (բաղալ) 25 ր.,—(ուխտել է լրացնել մինչեւ 100 ր.), Ա. Յարութիւնեան 1 ր., Դ. Մարտիրոսեանց 1 ր., Յ. Բուղաղեանց 50 կ., Եֆեմիա Շենգելի չորեր եւ 1 ր., Կէկէլ Ղամազեանց անկողին, Յ. Թորոսեանց, Ա. Տէր-Յովհաննէսեանց, Յ. Խէչանեանց—մի-մի բուբլի, իշխան Իլիա Խէրիէուլիձէ 50 կ., Ա. Արզուխանեան 5 ր., Յ. Էրմիչեանց 2 ր. Վառվառէ Էրմիչեանց 1 ր., Եղիսաբէթ Տէր-Մովսիսեանց 1 ր., Ախալցխայի Մ. Մովսիսեանց 5 ր., Մարիամ Գասպարեանց 50 կ., Ա. Կուզանեանց 1 ր., Զինա Նաբօրցկայա չորեր եւ 1 ր., Ֆ. Քալանթարեանց չորեր, Գ. Բայրամեանց 25 կ., Ն. Ստեփանեանց 5 ր. եւ ճօների համքարից 20 ր.։

Ընդամենը «Մշակի» խմբագրութեան մէջ ժողովվել է երկրաշարժի ազէտից վնասվածների օգտին 1400 բուբլի 15 կոպէկ դրամար եւ երեք հակ ու մի քանի կտոր հագուստեղէն ու անկողին։

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱՒԱՌԻ ԱՂԷՏԸ

(Հեռագիրներ սեփական թղթակցից)

—

Ախալքալաք, դեկտեմբերի 27-ին։ Վերջնականապէս կործանված են եւ աւերակների կոյտեր դարձած հետեւեալ գիւղերը—Մերենիա, Մեծ եւ Փոքր Սամսար ու Բեժանո։ Զոհերի թիւը այդ գիւղերում առ այժմ 375 է։ Զօրքը եւ ժողովուրդը շարունակում են փորել։ Աւելի քիչ են վնասվել Իմոիլա, Ալաթուբան, Ագանայ, Արագօվա, Մաջադիա, Արկնա եւ Խուլդումա գիւղերը։ Զոհերի թիւն այս գիւղերում 58 է։ Գաւառապետի նախագահութեամբ կազմված է մի յանձնախումբ։ Ազատվածները բերված են քաղաք։ Հիւանդների համար քաղաքում եւ Բարալէթում հիմնված են ժամանակաւոր հիւանդանոցներ։ Մանրամասնութիւնները նամակով։

Ախալքալաք, 27 դեկտեմբերի։ Մէրէնիի եւ Սամսարի մօտ բացվեցին ճեղքուածներ։ Քննում է այդ ճեղքուածները գէօլոգ Վերէր։ Քաղաքային ուսումնարանում ապաստանվել են 288 անձինք. քաղաքային ժամանակաւոր հիւանդանոցում ապաստանված 48 հիւանդներ. մեռան երկու հոգի։

—

Բաղուից մենք ստացանք հետեւեալ հեռագիրը. «Ժողովվել է 10,000 բուբլի որբերի ապաստարանի համար. Ախալքալաք ուղեւորվեց բժիշկ Գարեգին Սարգսեան»։

—

Առաջ ենք բերում այն տեղեկութիւնները, որոնք տպված են տեղական լրագիրներում։

«Тифлискій Листокъ»-ին հեռագրում են դեկտեմբերի 23-ից.

Ախալքալաք. Այցելեցի մի քանի աւերված տեղեր եւ ուշ գիշերով վերադարձայ Ախալքալաք։ Գրիչս հրաժարվում է պատմել տեսածս բոլոր սարսափները։ Իմ այցելած գիւղերից մի քանիսը ոչնչացած են հիմովին եւ նրանց նախկին գոյութեան իբրեւ վկայ մնացել են միայն ձիւնով ծածկված աւերակների կոյտեր։ Ահա Մերենիա գիւղը։ Նրա մէջ 120-ի չափ տուն կար. այս թուից այժմ մնացել են միայն 18—20 տուն, եւ սրանք էլ հեռաւորապէս միայն նմանում են տների։ Բոլոր մնացածներն աւերակների խառնաշփոթ կոյտեր են ներկայացնում։ Ոչնչացած են անհամար բազմութեամբ ոչխարներ եւ գրասներ։ Գիւղացիների ամբողջ գոյքը մատնված է կորուստի։

Աւերման եւ ժողովրդի կրած զրկանքների նկարագիրն անհնար է անել։ Ժողովրդին սարսափ է տիրել, որ սասկանում է աւելի եւս այն հանգամանքով, որ աւերված գիւղերի շրջանում նոյն իսկ երէկ զգացվել է երեք ստորերկրեայ հարված։ Փորվածները, չը նայելով Նաւագինցիների եռանդոտ եւ արիաջան աշխատութեան, դժուարութիւնների են հանդիպում ցրտի եւ այն հանգամանքի պատճառով, որ հարկադրված են փորել մեծ զգուշութեամբ, որովհետեւ փորողներն ենթարկվում են կենդանի թաղված լինելու վտանգին։ Առ այժմ հանված են աւերակների տակից եւ ընդհանրապէս գտնված են 223 դիակ ու 97 վիրաւորվածներ։ Որբերի եւ այրիների լացը, վիրաւորվածների հառաչները թնդացնում են տխուր շրջակայքը, ճմլում են մարդու սիրտն ու սառեցնում արիւնը։ Երկրաշարժից չաւերված Բարալէթ գիւղում հաստատված է կենտրօնական իջեւան-հաւաքատեղի, ուր բոլոր գիւղերից ուղարկվում են վիրաւորվածներ, կանայք եւ երեխաներ։ Այստեղ վիրաւորվածներին բժշկական օգնութիւն են հասցնում, կապում են վէրքերը, կերակրում են, հագցնում եւ ապա սահնակներով ուղարկում Ախալքալաք։ Այսօր քաղաք են ուղարկված 32 սահնակով վիրաւորված կանայք եւ երեխաներ։

Ախալքալաքի մանանխումը, որ կազմված է քաղաքի ներկայացուցիչներից եւ զինուորա-

կան ու քաղաքացիական աստիճանաւորներից, լաւ խնամում եւ բժշկական օգնութիւն է հասցնում վիրաւորվածներին։ Շարունակ ստացվում են առատ նուիրատուութիւններ եւ լիովին նպատակայարմար գործադրութիւն գտնում։

Ախալքալաք, դեկտեմբերի 24-ին։ Պարզվեց որ երկրաշարժից վիրաւորապէս վնասված են այն գիւղերը, որոնք գտնվում են Տարագխուրի լճի մօտ։ Դեկտեմբերի 19-ի երկրաշարժից առաջ ջրի մակերեւոյթը ցածրացել է եւ տեղական բնակիչների ասելով, այդ տեղերից սահնակներով անցնելու ժամանակ լսվում էր ստորերկրեայ գոռգոռոց, նման այն ձայնին, որ լսվում է կամրջով անցնելիս։ Իր ուժով այս անգամվայ երկրաշարժը գերազանց է մինչեւ անգամ 50-ական թուականների վերջում տեղի ունեցած երկրաշարժից։

Երկրաշարժից վնասվածներին, որպէս Ախալքալաք քաղաքում, այնպէս էլ գիւղից եկածներին, նահանգապետի կարգադրութեամբ, տրվում է տաք կերակուր եւ թէյ։

Իշխան կառավարչապետի կարգադրութեամբ Կովկասեան ինտենդանտվոյի վարչութեան կողմից ուղարկված պաշարեղէններն արդէն ստացված են եւ հետզհետէ բաժանվում են վնասվածներին։

Մտադրութիւն կայ երկրաշարժից վնասվածների համար ժամանակաւոր տներ շինել, իսկ մինչ այդ ժամանակ նրանք տեղաւորված են մասնաւոր բնակարաններում վարձով։

Ախալքալաք, դեկտեմբերի 24-ին, ցերեկվայ 12 ժամին։

Ամբողջ ազգաբնակութիւնն երկիւղածութեամբ լսեց նահանգապետ Ի. Ն. Սվեչինի հաղորդած տեղեկութիւնը Նորին Կայսերական Մեծութեան կողմից 50 հազար ռուբլու գումարի առատ նուիրատուութեան մասին յօգուտ երկրաշարժից վնասվածների։ Այդ լուրը մեծ մխիթարութիւն է ոչ միայն վնասվածների, այլ նաեւ ամբողջ ազգաբնակութեան համար։ Հազարաւոր բերաններից աղօթքներ են վերառաքվում դէպի երկինք մեծահոգի Թագաւորին առողջութիւն եւ արեւշատութիւն խնդրելու։

Երկրիս կառավարչապետի կարգադրութեամբ այստեղ երկրաբան Վերերը նահանգապետի հետ առաւօտեան ուղեւորվեց աղէտի տեղերը։ Ստորերկրեայ թոյլ հարուածները շարունակվում են։

Վիրաւորվածներին եւ առհասարակ վնասվածներին դուխօրօրները քաղաք են կրում ձրիաբար։ Այսօր սպասում են այստեղ մի խմբի գալստեան 60 սահնակներով։

Նահանգապետ Ի. Ն. Սվեչինի ներկայութիւնն աղէտի տեղում, նրա ջերմ ժամակցութիւնը կանանց եւ երեխաներին օգնելու եւ խնամելու գործում, քաջալերում է ժողովրդին։ Գիւղերում աշխատող զօրքին փոխարինելու համար քաղաքից ուղարկված է մի վաշտ զօրք։

Օֆիցէրները զօրքի եւ ժողովրդի հետ միացած աշխատում են. բոլոր զինուորականները անձնազոհութեան զարմանալի օրինակներ են ցոյց տալիս։

Բոլոր տեղական ազգաբնակութիւնը եւ գիւղացիները նուիրում են թէ փող, թէ պաշարեղէն, թէ շորեր եւ թէ անասուններ։

Քաղաքային դպրոցը յատկացրած է վնասվածներին ժամանակաւոր բնակութեան համար։

Հանված է 220 դիակ։

«Кавказъ»-ին հաղորդում են Ախալքալաքից դեկտեմբերի 24-ից.

Ախալքալաք. Կովկասեան շրջանի զինուորական բժշկական վերատեսուչ գաղտնի խորհրդական Մալինին առաջարկել է Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարին Կարմիր-Խաչի ընկերութեան կողմից 3,000 ռուբլու գումարի օգնութիւն, թէ փողով եւ թէ շորեղէնով, յօգուտ երկրաշարժից վնասվածների։

Հիւանդանոցում, ուր զետեղված են վիրաւորվածները, մշտապէս գտնվում են երեք զինուորական բժիշկ։ Իր եռանդով եւ անընդհատ աշխատութեամբ վնասվածներին օգնելու գործում աչքի է ընկնում Նաւահինեան գնդի կրտսեր բժիշկ Բրոնիկովսկին։

Վաղը, Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար Ի. Ն. Սվեչին մտադիր է ճանապարհ ընկնել Թիֆլիս, ուր իսկոյն մի մասնախումբ կը կազմէ վնասվածներին օգնութիւն հասցնելու համար։ Այդ մասնախմբին, ի միջի այլոց, մասնակցելու կը հրաւիրվեն եւ Կարմիր-Խաչի ընկերութեան ու բանկային հիմնարկութիւնների մի քանի ներկայացուցիչները։

Գիւղացիների գոյքը, որ մնացել է փլատակների տակ, հանված է առ այժմ 20 տներից միայն։

Երկրի տատանումն եւ ստորերկրեայ թոյլ հարուածներ տեղի են ունենում իւրաքանչիւր օր։ Տարագխուրի լիճը փոխել է իր ձեւը։ Լիճը հեռացնելու համար պէտք է գայ մի ինժենէր ջրաչափ։

Հարց է յարուցած գաղթեցնելու աղատվածներին իրանց տեղերից, որոնք այժմ ամեն օր ենթարկվում են երկրաշարժի, ուրիշ, աւելի ապահով տեղեր։

Ախալքալաք. դեկտեմբերի 24-ին, երեկոյեան երկրի տատանումները քաղաքում եւ աւերման ենթարկված տեղերում շարունակվում են եւ զգալի են լինում օրը երեք անգամ։ Վերջին հարուածը տեղի ունեցաւ այսօր, երեկոյեան 8 ժամին, բայց ինչպէս այս, այնպէս էլ նախընթաց հարուածները համեմատաբար թոյլ էին եւ զժբաղդութիւններ չառաջացրին։ Ժողովուրդը երկիւղի մէջ է։ Երկիւղ են կրում, թէ վաղը եկեղեցիներում աղօթողների բազմութեան մէջ կարող են դժբաղդ դէպքեր տեղի ունենալ, ի նկատի առնելով բնակիչների ջղային դրութիւնը, որոնք երկրի ամենափոքր շարժման ժամանակ անգամ դուրս են վազում տներից։ Վաղը, պատարագից յետոյ, քաղաքային հրապարակի վրա պէտք է մաղթանք կատարվի։

Վերջին հաշուով առանց ապաստարանի եւ հացի են մնացել մօտ 4500 հոգի։

«Тифлисскій Листокъ»-ին հեռագրում են դեկտեմբերի 25-ին։

Ախալքալաք։ Այսօր նահանգապետի պաշտօնակատար Սվեչին բաց արաւ այստեղ, Ախալքալաքի գաւառում երկրաշարժից վնասվածներին նպաստներ հաւաքելու եւ բաժանելու մասնախումբը։ Պարզաբանելով մասնախմբի նպատակը՝ նահանգապետը նրա նախագահութիւնը յանձնեց գաւառապետին, որից յետոյ անդամներն սկսեցին ընտրութիւններ անել մի կառավարական մարմին կազմակերպելու նպատակով։

Հայաբնակ Գիւմուրդի գիւղի բնակիչները ցանկութիւն յայտնեցին յանձն առնել վնասվածներից 60 հոգու խնամատարութիւնն առանց վարձի՝ պարտաւորվելով պահպանել նրանց մինչեւ գարուն։ Միւս գիւղերը նոյնպէս ցանկութիւն են յայտնում խնամել վնասվածներին։

Զօրքը շարունակում է փորուածքներ անել. փլատակների տակից նորից հանված են մի քանի դիակ եւ երկու կենդանի եզ։

Հալէլոյն ընկել է, ուստի աշխատանքները բարդվում են՝ հալէլոյից տներ են քանդվում։

Ստորերկրեայ հարուածները շարունակվում են, թէեւ աւելի թոյլ կերպով։

Ախալքալաք. դեկտեմբերի 26-ին։ Ստացվել են նուիրատուութիւններ՝ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչից որդոց հետ միասին—1000 ռուբլի, Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչից—500 ռ., Կարմիր-Խաչից—3000 ռ., Գօրիից—40 ռ., ուղղափառութեան վերականգման ընկերութիւնից Կովկասում—135 ռ., Բագուից—2000 ռ., Նաւահինեան գնդի զինուորներից, որոնք հրաժարվել են ռօնտածուից—360 ռուբլի, Դիլինկեա գիւղի բնակիչներից—19 ոչխար եւ 9 հաւ, Եղիշէ Բասուրմաճեանից—սպիտակեղէն 400 հոգու համար։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Դեկտեմբերի 23-ին

Ամսիս 22-ի դիշերը այստեղ սարսափելի հրդեհ պատահեց։ Այրվեց, մոխիր դարձաւ հարուստ Իսահակ Թադէոսեանի երեքյարկանի հոյակապ տունը։ Կրակը առաջացել էր խոհանոցից՝ խոհարարի անզգուշութիւնից։ Հրդեհը սկիզբն առնելով երեկոյեան ժամը 11-ին, շարունակվեց մինչեւ առաւօտեան ժամը 9-ը։ Իսկ ծուխը դեռ այժմ էլ շարունակում է բարձրանալ։ Կրակին ճարակ դարձաւ ոչ միայն ամբողջ շինութիւնը, այլ եւ՝ այրվեց, ոչնչացաւ ատտիրոջ ունեցածի համարեա $^2/_3$ մասը։ Տանտէրերը հրդեհի մասին միայն այն ժամանակ են իմացել, երբ կրակը ամբողջապէս բռնկել է շինութեան միջին մասը, ուր եւ գտնվում է խոհանոցը։

Կողմնակի օգնութիւնը շատ ուշ վրա հասաւ, որովհետեւ թէ՛ քաղաքիս բնակիչները, թէ ոստիկանութիւնը եւ թէ տեղական զինուորները միայն այն ժամանակ հասան, երբ բանը բանից անցել էր, այլ եւս ոչինչ չէր կարելի անել։ Միայն կարողացան կահ-կարասիքի մի մասը դուրս հանել։ Այնուհետեւ գլխաւոր ուշադրութիւնը դարձրվեց շրջակայ հարեւան շինութիւնների վրա, որովհետեւ կրակը սպառնում էր եւ այդ շինութիւններին։ Քանդեցին հարեւան շինութիւնների տանիքների մի մասը։ Մարդկային ոչ մի զոհ չէ պատահել։ Թադէոսեանին հասած վնասը մօտ հարիւր երեսուն հազար ռուբլու չափ են ասում։ Զարմանալին այն է, որ այդպիսի մի չքեղ շինութիւնը ոչ մի ընկերութեան մէջ ապահովագրած չէ եղել։

Այդօրինակ սարսափ ազդող հրդեհը քաղաքում ոչ առաջինն է եւ ոչ էլ վերջինը կարող է լինել։ Փորձանքը ամեն մի քայլափոխում անխուսափելի է։ Հետեւապէս, անհրաժեշտ ենք գտնում մատնացոյց անել այստեղ այն միանգամայն տխուր հանգամանքի վրա, որ շարունակ տեղի է ունենում քաղաքումս՝ հրդեհ պատահած ժամանակ։ Խօսքը հրդեհաշէջ խմբի բացակայութեան է վերաբերում։ Երեւակայեցէք, ներկայ հրդեհի ժամանակ ամբողջ քաղաքում չը գտնվեց մի հատ հրշէջ մեքենայ, որով կարելի լիներ մասամբ օգնութեան հասնել։ Ցաւալի էր տեսնել օգնութեան համար պատրաստակամ մարդկանց անզօրութիւնը, որոնք ոչ միայն չէին կարողանում ձեռք բերել գործիքներ, այլ եւ երկար սանդուղքներ էին պահանջում, դրանք էլ չէին ճարվում։

Այժմ հարցնում ենք, մթթէ մեր քաղաքային դուման չէր կարող նախատեսել քաղաքումս պատահելիք հրդեհները եւ վաղօրօք աշխատել մի քանի անհրաժեշտ հրշէջ գործիքներ ձեռք բերելու։ Ժամանակ չէ՞ արդեօք, որ հրդեհաշէջ խումբ պահելու հարցը հրապարակի վրա դնվի։

Ինչպէս յայտնի է, նախկին Հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը իր հարուստ գրադարան-ընթերցարանը նուիրել էր քաղաքին այն պայմանով, որ վերջինս աշխատէ թոյլտուութիւն ձեռք բերելու՝ իր անունով բաց անելու յիշեալ գրադարան-ընթերցարանը։ Ամսիս 22-ին կայացած նիստում դուման միաձայն վճռեց սիրով ընդունել ընկերութեան գովելի առաջարկը եւ քաղաքային գրադարան-ընթերցարան ունենալու գործը, որքան կարելի է, չտապեցնել։ Նոյն այդ նիստում՝ ապագայ գրադարանի համար տնօրէնի պաշտօնով ընտրվեց ձայնաւոր պ. Ց. Մելիք-Յովսէփեան։ Ընտրվեց նոյնպէս մի մասնաժողով, որին յանձնարարվեց չուտով կազմել գրադարան-ընթերցարանի ծրագիրը։ Յիշեալ ծրագիրը վերջանալուց՝ դուման պիտի առաջարկէ պատշաճաւոր իշխանութեանը եւ հարկաւոր թոյլտուութիւնը ստանալուց՝ պիտի բանայ գրադարան-ընթերցարանը։ Բնակարանի համար վճռված է առ այժմ դումայի շինութեան մի երկու սենեակները յատկացնել, այնուհետեւ կարելի է աւելի յարմար բնակարան վարձել։

Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, դեկտեմբերի 26-ին, Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում, Թիֆլիսի թեմի առաջնորդ Գ. արքեպիսկոպոս Սուրէնեան խօսեց քարոզ Ախալքալաքի գաւառի վնասվածների մասին, յորդորելով օգնել թշուառացած ազգաբնակութեան. յիշելով որ դահի բարձրութիւնից բաց տվվել է մեծ նպաստ կարօտեալների համար, նա կատարեց յատուկ մաղթանք Թագաւոր Կայսրի արեւշատութեան համար։ Նոյն օրը քարոզներ խօսվեցին Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում եւ կատարվեցին ժողովարարութիւններ։ Մի քանի անձինք ուղարկել են կօնսիստորիային հաղուստեղէն Ախալքալաք ուղարկելու համար։

—

Թիֆլիսի թեմի գործակալներին թեմական իշխանութիւնից առաջարկված է ժողովարարութիւն անել երկրաշարժից վնասված գիւղացիների օգտին։ Իսկ Ախալցխայի յաջորդին առաջարկված է անյապաղ գնալ Ախալքալաք եւ այնտեղի քահանաների հետ կազմակերպել դժբաղդացածներին օգնելու գործը։

—

Մինչեւ այժմ Անդրկովկասի սահմանների վրա, թէ Թուրքիային եւ թէ Պարսկաստանին կից, մաքսային եւ կարանտինային վարչութիւնները միացրած են, թէեւ վաղուց հարց է յարուցված նրանց բաժանելու։ Այժմ ֆինանսների մինիստրութիւնը առաջարկել է ներքին գործերի մինիստրութեան ընթացք տալ այդ խնդրին եւ վերջնականապէս նրան լուծել։

—

Որոշված է, որ Ռուսաստանից Աֆղանիստան արտահանվող բամբակեղէնի մաքսը յետ դարձնվի ապրանքատերէրին։ Այդ կարգադրութեան նպատակն է Ռուսաստանի բամբակեղէնի համար նոր վաճառանոցներ գտնել Ասիայում։

—

Պետերբուրգի Անտառային ընկերութեան մէջ Գ. Դանիէլբէգ կարդաց մի զեկուցում անտառային գործի վերաբերութեամբ Ռուսաստանում վերջին 33 տարվայ ընթացքում։ Զեկուցողի կարծիքով, հիւսիսում եւ հարաւում չէ կարելի միատեսակ անտառային տնտեսութիւն ունենալ։ Հիւսիսում դեռ նելելի է անտառաբուծութեան աւելի նախնական եղանակ, իսկ հարաւում պարտաւորեցուցիչ է աւելի խնամենդիր տնտեսութիւն։

—

«С.-Пет. Вѣдомости» լրագիրը լսել է, որ պէտք է արգելվի Պարսկաստանից դէպի Անդրկասպեան երկիրը սառը չաքարի ներմուծումը։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 16-ին, Բագուի նահանգական դատարանը, քննելով զուբայցի Մէշադի-Ազա-Հուսէյն-բէկ Հաջի-բէկ-օղլու եւ Ալի-Աբաս Թուրաբ-օղլու գործը, որոնք մեղադրվում էին գեներալ Լիսէնկօի սպանութեան գործի մէջ, արդարացրեց նրանց։ Մեղադրեալներին պաշտպանում էր Բագուից եկած փաստաբան Բայկով»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Ղուբայի կլուբի փոքրիկ դահլիճում ամսիս 16-ին կայացաւ Մ. Զանդարեանի կօնցէրտը, որը գրաւել էր հասարակութեան բազմութիւն։ Կօնցէրտն աջող անցաւ, որին գլխաւորապէս նպաստեցին Սափարեան ամուսինները։ Երգիչը շնորհալի կերպով ածում է եւ պարսկական «Թառի» վրա. նա հայերէն երգեց՝ «Զայն տուր ով ծովակ», «Կրոունկ»։

—

Շիրակի գաւառի ԴԶԼԶԱԽԶԱԽ գիւղից մեզ գրում են. «Նոյեմբերի 28-ին Շիրակի գաւառապետը, Կարսի շրջանի ժողովրդական դպրոցների տեսչի կարգադրութեամբ, աճուրդով ծախեց Ղօշավանքի նախկին ուսումնարանի շինութիւնը, որ բաղկանում էր մի սենեակից եւ մի փոքր սրահից։ Աճուրդը մնաց Ղօշավանքի հասարակութեան վրա 20 ռ. 50 կոպէկով եւ ուսումնարանի գրասեղանները ու գրատախտակը 1 ռ. 75 կոպէկով։ Ուսումնարանի շէնքը իր կահկառասիքով ծախվեց 22 ռուբլի 25 կոպէկով»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, դեկտեմբերի 12-ին

Այսօր Բերդաթաղի ս. Աստուածածին եկեղեցում կատարվեց հոգեհանգստեան պաշտօն Շուշում վախճանված բարերար Թադէոս Թամիրեանցի համար։ Երկսեռ խուռն մի բազմութիւն ներկայ էր տխուր հանդէսին, ինչպէս նաեւ Աբամեան եւ ս. Աննայեան դպրոցների երկսեռ սաները։ Ի դիմաց երկսեռ աշակերտների՝ աշակերտուհիներից մինը գամբանական կարդաց, որի մէջ յիշված էր հանգուցեալի զանազան բարեգործութիւնները եւ, ի միջի այլոց, Թաւրիզի Բերդաթաղի դպրոցներին արած չափելի նուիրատուութիւնը։ Հանգուցեալը դեռ իր կենդանութեան ժամանակ այդ դպրոցներին նուիրել էր 10,000 ռ., եւ նոյն դպրոցների հոգաբարձութիւնը այս առիթով վճռեց, որ ամեն տարի հոգեհանգիստ կատարվի։

Այս առիթով կարեւոր ենք համարում մի քանի տեղեկութիւններ տալ Թաւրիզի երկու ուրոյն եւ անջատ թաղերի վրա, որտեղ բնակվում են հայերը։

Պէտք է գիտենալ, որ այս երկու թաղերից իւրաքանչիւրը ունի իր առանձին երկսեռ դպրոցներ, կանանց ընկերութիւններ, կար ու ձեւի արհեստանոցներ, գրադարաններ եւ եկեղեցիներ։ Երկու թաղերը իրարից 20 բօպէ հեռաւորութեամբ բաժանված են. երկու թաղի մէջտեղը կան թուրքերի տներ եւ բազարներ, որտեղ նստում են պարսիկ մանրավաճառներ։

Բերդաթաղն ունի մօտաւորապէս 200 տուն հայ բնակիչ, մեծ մասամբ հարուստ. զանազան կտակներով եւ մեծամեծ նուիրատուութիւններով այս թաղի դպրոցը գրեթէ ապահովված է իր ապագան. նրանց եկամուտներով մատակարարվում է երկսեռ դպրոցը, եւ բացի դրանից, ռուսաց կառավարութիւնը նպաստում է նոյն դպրոցին տարեկան 500 ռուբլի մի նպաստով, ռուսաց լեզուի ուսուցման համար, եւ պարսից կառավարութիւնն էլ, տարեկան նոյնքան մի գումար յատկացրած է պարսից լեզուի ուսուցման համար։

Իսկ հայոց միւս թաղը՝ Լիլաւան զուրկ է այս նպաստներից եւ հասոյթաբեր եկամուտն էլ շատ չնչին է, հետեւաբար այս թաղի երկու դպրոցը չէ կարող ծառայել իր բարի նպատակին, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ այս թաղն ունի 400 տուն հայ բնակիչ եւ մեծ մասամբ աղքատ։

Հաւասարակշռութիւնը պահելու համար հար-

կաւոր է, որ արտասահմանում բնակվող բարեբարներ, երբ մտադրվում են յանուն Թուրքիի մի բարերարութիւն անել, պէտք է ի նկատի ունենան մանաւորապէս այս աղքատ թաղը եւ իրանց նուէրները յատկացնեն յանուն Լիլաւայ թաղի Հայկազեան եւ Թամարեան երկսեռ դպրոցների։ Պէտք չէ ասել, որ այդ մի եւ նոյն բանն է, նուիրատուութիւնը լինի այն թաղին կամ այս թաղին, բաւական է, որ նուիրատուութիւնը լինում է եւ ծառայում է յոգուտ Թուրքիի հայերի։ Ո՛չ, շատ մեծ տարբերութիւն կայ այդտեղ։ Թաղերից մինն առաւել չափով վայելում է ազահութիւն նիւթականի կողմից, իսկ միւսը մնում է աղքատ եւ անապահով։ Եթէ թաղերն իրարից այնքան հեռու չլինէին եւ եթէ այդ երկու հայ թաղերի մէջ թուրքեր չը բնակվէին եւ թուրքերով լի բազարը գոյութիւն չունենար, գուցէ այս տարբերութիւնը այնքան աչքի չընկնէր, որովհետեւ այդ պարագայում աշակերտ եւ աշակերտուհիներ կարող էին Լիլաւայից գնալ Բերդաթաղի դպրոցը։

Սակայն, ով որ Պարսկաստան եղել է, նա գիտէ թէ ինչ ասել է թուրքն ու պարսիկը եւ ինչ վտանգներ կան անմեղ երեխաների համար, մէկ թաղից միւսը գնալիս։ Քանի քանի անգամներ խեղճ հայ երեխաները, մէկ հայ թաղից միւսը երթեւեկելիս, ենթարկվում են թուրքերի կողմից նախատինքների, վիրաւորանքների, թակի եւ այլն։ Դեռ մօտ ժամանակներս, Լիլաւայից Ղալայի (Բերդաթաղ) դպրոցն յաճախող հայ երեխաներին թուրքերը բռնելով համբուրել էին, մի աշակերտուհու ոսկեղէն զարդն էին գողացել եւ այլն։

Ուրեմն, իրաւունք ունենք այս երկու թաղերի մէջ տարբերութիւն դնել, եւ խնդրել բարերարներից, որ ի նկատի ունենան Լիլաւայ թաղի Հայկազեան եւ Թամարեան երկսեռ դպրոցները եւ իրանց նուէրները այս անունին ուղղեն։

Այս մասին մի անհերքելի փաստն էլ այն է, որ Բերդաթաղը ապագայ չունի, մասնաւորապէս հայերի բազմանալու տեսակէտից. որովհետեւ այդ թաղը ընդարձակվելու համար թէ յարմարութիւններ չունի եւ թէ հող կը պակսի նորանոր շէնքեր կառուցանելու համար։ Մինչդեռ, ընդհակառակը, Լիլաւայ թաղը այդ տեսակէտից մեծ ապագայ ունի, ամայի ընդարձակ հողեր կան, որ հեռզհեռէ հայերը գնում են եւ տուներ կառուցանում. հաշւած է որ այս թաղում ամեն տարի տասն հայ տուն աւելանում է։

Դոկտ. Կ. Փաշայեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական լրագիրներին Կ. Պոլսից հաղորդում են, որ Մահմուդ-փաշայի փախուստից յետոյ երեւաց, որ թուրքաց կայսերական ընտանիքի ուրիշ անդամները եւ բարձրաստիճան անձինք եւս փախչելու հնարներ են որոնում։ Սուլթանը այդ պատճառով, իբր թէ, վճռեց աւելի եւս բազմապատկել առանց այն էլ բազմաթիւ դաղտնի ոստիկանութիւնը եւ, բացի դրանից, վերակազմել ոստիկանութիւնը։

—Այս օրերս Զմիւռնիայի մօտ բռնվեց յունական «Էլլէնիցա» շոգենաւը, որը փորձում էր ներմուծել երկրի մէջ արգելված զէնքեր։ Կ. Պոլսի լրագիրների խօսքով, թուրքաց իշխանութիւնները գրաւեցին 350,000 փամփուշտներ, 450 բէվոլվէրներ, ծխախոտ, մի քանի արկղ զանազան զէնքեր եւ ուրիշ ապրանքներ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

—

24 դեկտեմբերի

ՓԷՏԷՐ։ «Բէյտէրի գործ.»։ Այսօր անգլիական թղթանօթները ամբակոծում էին բօէրների հողային ամրութիւնները։ Լեգդիտով լցված ռումբերը ցրիւ տուին թշնամու հողաթումբերը, որոնք բարձրացած էին տափարակի մէջ զետեղված կաֆրների գիւղի ձախակողմում։ Թշնամին ուրիշ զիրք գրաւեց։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտ. գործ»։ Հրամայված է կազմակերպել անկանոն զօրքի 16 բատալիօն։

ՀՌՕՄ. «Ստեֆանիի գործ.» «Italia» լրագրի ասելով՝ քիչ առաջ Հռոմից անցկացան երեք բօէր օֆիցեր։ Հռոմում նրանք գնեցին չինութեան համար հարկաւոր փայտեղէն եւ փորձ արին գնելու նաեւ զէնք ու պատերազմական մթերք։ Լրագիրն աւելացնում է, թէ Նէապոլի եւ այլ իտալական նշանաւոր նաւահանգիստների վրա Անգլիան խիստ հսկողութիւն է նշանակել եւ առանձին ուշադրութեամբ հետեւում է մասնաւոր այն շոգենաւերին, որոնք ուղարկվում են հարաւային Աֆրիկա։

ՊԱՐԻԶ. «Հաւասի գործ.»։ Նիստը վերսկսելուց յետոյ, հասարակութեան ներկայութեամբ, Ֆալիերը կարդում է դատավճիռը։ Լսվում է մի քանի անգամ աղաղակ. «կեցցէ Դէրուլէդ, կեցցէ զօրքը»։ Նիստը փակված է։ Գէրէնը, որ դատապարտված է 127 ձայնով, կը պահվի Ֆրանսիայում։ Ինչ վերաբերում է Դէրուլէդին, պէտք է ասել, որ սենատը վճռեց միացնել այն պատիժները, որոնց դատապարտված էր նա։ Հաւատացնում են, թէ Բիւֆֆէն ցանկութիւն յայտնեց ուղարկվել Բրիւսսէլ, իսկ Դէրուլէդը—Սան-Սեբաստիան։ Ասում են, թէ Բիւֆֆէն եւ Դէրուլէդ այս գիշեր կը տարվին բէլգիական սահմանը։ Գէրէնը շուտով կուղարկվի, հաւանականաբար, Կլերվօյի կենտրօնական բանտը։

ԼՕՆԴՕՆ. «Բէյտ. գործ.»։ Պաշտօնական հեռագրի համաձայն՝ գնդապետ Մօնմօրանսին իր զօրաբաժնի հետ միասին հեռացաւ Դօրդրեխտից եւ գրաւեց Բերգօ-Սայդինգ կայարանը, Ինդուէի երկաթուղային ճանապարհի վրա։

ԲԵԼՄՕՆՏ. «Բէյտ. գործ.»։ Գնդապետ Պելլէրը, ռազմագիտական դիտումներով, չը կարողացաւ ամրանալ Դուգլասում, որովհետեւ նրան յանձնարարված էր հետախուզութիւններ կատարել միայն։ Նա հեռացաւ այդ տեղից, տանելով իր հետ Անգլիային հաւատարիմ մնացած բոլոր բնակիչներին։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Բօէրների գլխաւոր բանակից հաղորդում են, որ վեց ձիաւորի յաջողվեց համարձակօրէն փախուստ տալ Լէդի-Սմիթից, ենթադրում են, թէ փախչողների մէջ եղել են գնդապետ Բօգսը կամ գօլտոր Ջեմսօնը եւ կամ երկուսը միասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 24-ին, 9½ ժամին առաւօտեան տեղի ունեցաւ վիպասան Գրիգորովիչի թաղումն Վօլկովեան գերեզմանոցում։ Թաղմանը ներկայ էր Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Կոնստանդին Կոնստանդինովիչը։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտէրի գործ.»։ «Standard» լրագրին հաղորդում են Կապշտադից դեկտեմբերի 22-ից։ Օրանժեան հանրապետութիւնից ստացված տեղեկութիւնների համաձայն, նախագահ Շոէյնը հրատարակել է մի յայտարարութիւն, որի մէջ ասված է, թէ ամեն մի սպիտակամորթ, որ ապրում է հանրապետութեան հողի վրա, պէտք է լիակատար իրաւունքներ ունեցող քաղաքացի ճանաչվի եւ պարտաւորվի զէնք վերցնել հանրապետութիւնը պաշտպանելու համար։

Առաւօտվայ լրագիրների հեռագրներում հաղորդվում է, թէ բօէրները յետ քաշվեցին Մօլտենոյից եւս, երբ գեներալ Գատէկրը մօտեցաւ այդ քաղաքին հետեւակ զօրքով, Կապի նահանգի հեծեալ եգերներով եւ թնդանօթներով։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ «Բէյտէրի գործ.»։ Դեմոկրատ Կվերլ'սը մի առաջարկութիւն արաւ պատգամաւորների ժողովին ամենաջերմ համակրութիւն յայտնելու հարաւ-աֆրիկական երկու հանրապետութիւններին նրանց ազնիւ, հայրենասիրական եւ քաջարի պատերազմի համար, որ նրանք մղում են այժմ իրանց կառավարութիւնը ջնջումից փրկելու համար։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործ.»։ Դէրուլէդն եւ Բիւֆֆէն հանվեցին այսօր առաւօտեան ժամի 4-ին բանտից եւ տարվեցին հիւսիսային երկաթուղու կայարանը, որտեղից ցառաւօտեան 5 ժամին կուղեւորվեն դէպի բելգիական սահմանը։

ԹԻՖԼԻՍ։ Ի նկատի առնելով վերջին ժամանակ տարածված լուրերը Աֆղանիստանի խռովայոյզ դրութեան մասին, որ առաջացել է, իբր թէ, Էմիր Աբդուրահմանի մահվան պատճառով, ի նկատի առնելով նոյնպէս հնդկական ցեղերի մէջ նկատված յուզման վերաբերեալ լուրերը, մեր զինուորական վարչութիւնը, որպէս յայտնի եղաւ մեզ, մի փոքրաթիւ զօրաբաժնի տեղափոխութեան փորձ կատարեց Կովկասից դէպի Անդրկասպեան շրջանը։ Այդ զօրաբաժինն երկաթուղով ուղարկվեց Թիֆլիսից Բագու, այնտեղից ծովով Կրասնովոդսկ, իսկ Կրասնովոդսկից երկաթուղով մինչեւ Կուշկա, ուր եւ հասաւ այս դեկտեմբերի 20-ին։ Այդ փորձը պէտք է համարել աջողված, որովհետեւ դրանով ապացուցված է, որ եթէ կարեւորութիւն լինի, կովկասեան զօրքի բաժինները կարող են Կուշկա հասնել 8 օրում։

Դեկտեմբերի 25-ին

ՐԵՆՍԲՈՒՐԳ, «Բէյտ. գործ.»։ Լուսաբացին բօէրները յանկարծական յարձակումն գործեցին անգլիական զօրքի ձախ թեւի վրա, բայց յետ մղվեցին։ Դրանից յետոյ նրանք գրաւեցին հիւսիսային կողմում գտնվող բլուրը, որտեղից մի քանի ժամ շարունակվող թնդանօթաձգութիւնից յետոյ նոյնպէս հալածվեցին. բօէրները դեռ եւս գտնվում են այն բլուրների վրա, որոնք անմիջապէս մօտ են քաղաքին, այն պատճառով խանգարում են անգլիացիներին առաջ գնալ երկաթուղու գծի ուղղութեամբ։ Անգլիացիների կորուստը սակաւ է, այն ինչ բօէրները, ինչպէս լսվում է, 100 մարդ են կորցրել. նրանցից 20 հոգի գերի են առնված։ Կօլսբերգ քաղաքը դեռ եւս գրաւված չէ Ֆրէնչի զօրքերից։

ՍՏԵՐԿՍՏՐՕՄ։ «Բէյտ. գործ.» Թշնամին բոլորովին յետ քաշվեց Մօլտենօից։ Նրա երէկվայ յարձակման պատճառը յայտնի չէ։ Գուցէ բօէրները մտադրութիւն ունէին անգլիացոց ուշադրութիւնը գրաւել, որպէս զի նրանք չը նկատեն թշնամու մի այլ շարժումը կամ գուցէ կամենում էին թակարդի մէջ գցել Գօտէկրին։

ԲԵԼՄՕՆՏԻ մօտ Կրուկակի ագարակից. «Բէյտ. գործ.»։ Բօէրների զօրաբաժինը, որին յունվարի 1-ին ցրվեց գնդապետ Պելլէրը Սօնհիւէյտի մօտ, բաղկացած էր, մօտաւորապէս 180 մարդուց։ Նրանցից 43 հոգի գերի են առնված, իսկ երեսուն հոգի սպանված են եւ վիրաւորված։ Բօէրների զօրաբաժինը, որ դուրս էր եկել Մագդերսֆօնտէնից, գրաւեց, ինչպէս ասում են, երէկ երեկոյեան Սօնհիսէյդը, բայց դրականապէս դեռ այդ մասին ոչինչ յայտնի չէ։

ԱՆՏՎԵՐՊԷՆ։ «Վօլֆի գործ.»։ Այստեղ սաստիկ անհանգստութիւն է պատճառում գերմանական-աֆրիկական գծի «Henzoa» շոգենաւի վիճակը, որով Տրանսվալ է ուղեւորվել բելգիական Կարմիր-Խաչի ընկերութեան մի բաժին։ Շոգենաւը պէտք է Լօրենցօ-Մարկէզ հասնէր ոչ ուշ, քան յունվարի 2-ը. բայց այդ մասին դեռ եւս ոչ մի տեղեկութիւն չը կայ։

ԲՐԻՍՍԵԼ։ «Վօլֆի գործ.»։ Արդարադատութեան նախկին մինիստր Լէժէնի նախագահութեամբ տեղի ունեցաւ այն մասնախմբի առաջին նիստը, որ կազմված է այստեղ նախագահ Մակ-Կինլէյին պատիւ ուղարկելու համար, որպէս զի նա միջնորդ հանդիսանայ Անգլիայի եւ Տրանսվալի մէջ։ Նիստին ներկայ էին շատ պատգամաւորներ եւ ուրիշ ականաւոր անձինք։ Կազմված է մի ուղերձ, որով խորին ցաւակցութիւն է յայտնվում այն արիւնահեղ պատերազմի առթիւ, որ ծագել է Հարաւային Աֆրիկայում երկու կուլտուրական ազգի մէջ եւ հարկադրաբար խնդրվում է Մակ-Կինլէյից միջնորդի դեռ ստանձնել։ Բրիւսսէլում եւ գաւառներում ուղերձը դրված կը լինի հասարակական հիմնարկութիւնների մէջ՝ ստորագրութիւններ ժողովելու համար։ Բացի դրանից կը հրատարակվի կոչումն՝ ուղղված խաղաղութեան ընկերութեան քարտուղարական բիւրօին՝ նրա հաւանութիւնն ստանալու համար։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործ.»։ Երկաթուղու այն գնացքը, որով ուղարկվում են Դէրուլէդ եւ Բիւֆֆէ դէպի բելգիական սահմանը, դուրս գնաց հիւսիսային երկաթուղու կայարանից առաւօտեան ժամը 5-ին։ Գնացքը չարժվելու րոպէին ոչ մի միջնադէպ տեղի չունեցաւ, միայն Դէրուլէդն աղաղակեց. «ուրէյ հանրապետութիւն, կեցցէ հանրապետութիւնը»։

ԱՄՍՏԵՐԴԱՄ։ «Բէյտ. գործ.»։ «Neuwe Rotterdamsof Courant» լրագիրը տպագրել է հետեւեալ հեռագիրը՝ ստացված հատատ աղբիւրից, բայց ոչ Տրանսվալից կամ Օրանժեան հանրապետութիւնից։ «Մասնաւոր արժանահաւատ տեղեկութիւններից երեւում է, որ, անկասկած, բազուտօներին, սվայիներին եւ կաֆրներին, որոնք բնակվում են Տրանսվալի հիւսիս-արեւմտեան սահմանի վրա, շարունակ դրդում են ընդդէմ բօէրների։ Այսպիսով դրդված աւազակային խմբերը յարձակվում են սպիտակամորթների վրա եւ սպանում ու յափշտակում են կանանց եւ երեխաների։ Անգլիացիք բռնում են այդ եղելութիւնները հաղորդող հեռագրները եւ ամեն կերպ աշխատում են թաղցնել այս հանգամանքին վերաբերեալ տեղեկութիւնները։

ՄԵՖԿԻՆԳ։ «Բէյտ. գործ.»։ Դեկտեմբերի 24.-ին։ Պաշարված զօրքը այսօր, դուրս գալով քաղաքից, վճռական յարձակում գործեց թշնամու վրա, բայց կատաղի կռուից յետոյ, յետ մղվեց, կորցնելով 21 սպանված եւ 23 վիրաւորված։

ԲՐԻՍՍԷԼ, «Բէյտ. գործ.»։ «Պատերազմի աստառը» վերտառութեամբ «Indépendance Belge» լրագիրը տպագրել է մի շարք հեռագիրներ, որոնց ճշտութեան մասին նա երաշխաւորում է։ Այս հեռագիրներն ուղարկել են միմանց գաղթականութիւնների մինիստրութեան հարաւային աֆրիկական բաժնի կառավարիչ Ֆէսֆիլդ եւ Սէսիլ Ռոդսի մասնաւոր հաւատարմատարը, «Chartered Company Toycku»-ի կառավարելը։ Իր եզրակացութեան մէջ այդ հեռագիրների մասին, Բրիւսսէլի լրագիրը խրատօրէն քննադատում է Զէմբերլէնին, որ ինչպէս ասում է նա, գցեց Անգլիային չարաբաղդ պատերազմի մէջ։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործ.»։ Տպագրել է մի տեղեկութիւն հետեւեալ բովանդակութեամբ. Սան-Դոմինգոյում տեղի ունեցան ցոյցեր, որովհետեւ ֆրանսիական հիւպատոսը պրաւել է այն մաքսային արդիւնքները, որոնք գտնվում են «Improvemeut Company» ընկերութեան ձեռքում։ Սան-Դոմինգոյի կառավարութիւնը, դեռ 1895 թուին խոստացել էր վճարել ֆրանսիական հպատակներին յիշեալ ընկերութիւնից հասած վնասները։ Որովհետեւ նոր կառավարութիւնը յամառութեամբ հրաժարվում է կատարել այդ պարտաւորութիւնը՝ ուստի եւ հիւպատոսին հրամայված էր գրաւել մաքսային արդիւնքները։ Հէնց այս պատճառից էլ առաջացան ցոյցերը։ Ֆրանսիական կառավարութիւնը հեռագրել է Ատլանտեան ովկիանոսի ծովային դիվիզիային անյապաղ ուղեւորվել դէպի Սան-Դոմինգո։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործ.»։ Գէրէնը տարվեց Կլերվօյի բանտը, ուր եւ կը կրէ կրէ պատիժը։ Ուղեւորութիւնը կատարվեց առանց միջնադէպքերի։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտէրի գործ.»։ Պաշտօնական հեռագիր Բադէն-Պաուէլլից՝ Մէջիդից։ Դեկտեմբերի 24-ին առաւօտեան ես յարձակվեցի թշնամու հողային ամրութիւններից մէկի վրա երեք թնդանօթով, Բէգուդանեան գնդի երկու էսկադրօնով եւ զրահապատ գնացքով։ Յարձակումը կատարվեց քաջութեամբ, բայց բոլոր ջանքն եւ աշխատութիւնը՝ գրաւելու հողային ամրութիւնը՝ ապարդիւն անցաւ։ Ես յետ քաշվեցի կորցնելով երեք օֆիցեր սպանված, երեքը վիրաւորված եւ բազմաթիւ զինուորներ։

27 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 1900 թուականի յունվարի 1-ին Զմեռային պալատում, պատարագից յետոյ, տեղի կունենայ ընդունելութիւն շնորհաւորութիւններ մատուցանելու համար Նոցա Մեծութիւններին եւ Նոցա Բարձրութիւններին։

ԿԱՊՇՏԱԴՏ։ «Բէյտ. գործ.»։ Դեկտեմբերի 25-ին։ Գարշելից հաղորդում են, թէ բօէրները թողել են Լէդի-Գրէյն եւ այժմ ամրութիւններ են շինում Լէդի-Գրէյի եւ Բէրկլիէստի մէջտեղը։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտ. գործ.»։ Դուրբանից լրագիրների ստացած տեղեկութիւններից երեւում է, որ դեկտեմբերի 24-ին, ուշ երեկոյեան, բօէրները յարձակում գործեցին Լէդի-Սմիթի վրա, բայց յետ մղվեցին, իսկ առաւօտեան, դեկտեմբերի 25-ին, նորից սկսեցին ռմբակոծել քաղաքը։ Ֆրէրի մօտ գտնվող բանակից դեկտեմբերի 25-ին ստացված հեռագրով հաղորդում են. «Լուսաբացին Լէդի-Սմիթին ենթարկվում է սաստիկ ռմբակոծութեան։ Անգլիացիք ճշդութեամբ հետազօտեցին բօէրների դիրքերը։ Ծովային թնդանօթները ցրվում են թշնամու ամրութիւնները։ Անգլիացիները ոչ մի կորուստ չունեցան։ Կուրմանի բերդապահ զօրքը, սաստիկ ռմբակոծութեան ենթարկվելուց յետոյ, անձնատուր եղած 108 մարդ 12 օֆիցէրների հետ գերի ընկան։ Դեկտեմբերի 25-ին, ճաշից յետոյ, Բուլլէրը հետեւեալ հեռագիրն է ստացել. «Ցարձակումները վերսկսվեցին. սաստիկ նեղում են ինձ»։

Այլ եւս տեղեկութիւններ Բուլլէր չէր ստանում, բայց նրա բանակում լուրեր են պտըտում, որ երեկոյեան 5 ժամին Ուայտ ջարդեց թշնամուն, գերի վերցնելով 400 մարդ։ Ֆրէրի մօտ եղած բանակից հաղորդում են դեկտեմբերի 25-ից, որ կէսօրից յետոյ 1 ժամին, չիվելեան գնդի մէջ իրարանցում ընկաւ, եւ բոլոր զօրքերը շտապով դուրս եկան դաշտը։

ԿԱԼԿԱԹԱ։ Կառավարութիւնը ոչինչ այնպիսի տեղեկութիւններ չը ստացաւ, որոնք երկիւղ կարողանային առաջացնել գործերի դրութեան մէջ Աֆղանստանում։ Բոլոր նորագոյն տեղեկութիւններից երեւում է, որ այնտեղ ամեն բան հանգիստ է։

ՊԱՐԻԶ։ Այսօր Վիլլ դ'Անվիլի մէջ տեղի ունեցաւ սովորական ուխտագնացութիւն դէպի Գամբէտտայի արձանը։ Վալդէկ-Ռուսսօ եւ Գալիֆէ ուղարկեցին իրանց փոխանորդներին։ Արտասանված ճառերի մէջ կոչում էր լինում միաբանութիւն եւ համաձայնութիւն հաստատել, որոնք անհրաժեշտ են, քան երբ եւ իցէ։ Վալդէկ-Ռուսսօին շնորհաւորական ուղերձ ուղարկվեց այն կուսի առիթով, որ նա վարում է հանրապետութեան պաշտպանութեան համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

առեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ,—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. ԳՐՕՑԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1½—2 ժ. ներքին հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ. ԳՐՕՑԱՍԵՎԻՉ—5—6 ժ.
Ա. Ն ՇԳԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն մէզի, խիպի և արեան:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
69—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՆԿԱՐԱՀԱՆԴԷՍ

Ամսիս 29-ին բացվում է Թիֆլիսի Փառքի տաճարում նկարիչ

ԱՐՇԱԿ ՓԵԹՎԱՃԵԱՆԻ
ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Հանդէսը բաց է մնալու մինչև յունվարի 15-ը առաւօտեան ժամի 10-ից երեկոյեան 5-ը: Մուտքն է 20 կոպէկ մեծերի համար: Ուսանողներ, տղայք և ստորին աստիճանի զինուորների համար 10 կոպէկ: 2—3

ՄԱՆՍԻԿՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ

Տօների առիթով նոր լոյս տեսան

ԱՆԴԱՐԴ ՀԱՆԷՍԸ

ԵՒ

ՊՍՏԻԿ ՈՒ ՉՍՏԻԿ

Պատկերազարդ գրքոյկները:

Պատկերները տպված են Գերմանիայի Շտուտգարդ քաղաքում, Լէօվէյի յայտնի ֆիրմայում. տպագրութիւնը մաքուր, թուղթը լաւ և արժէ իւրաքանչիւր օրինակը 40 ԿՕՊԷԿ: Ընկերութեան գրասենեակում վաճառվում են նոյնանման պատկերազարդ և այլ գրքեր:

Դիմել՝ Тифлисъ, контора Общества Изданія Армянскихъ книгъ (Лорисъ-Меликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens. 4—5

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ

ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ:

Հասցէն՝ Красногорская ул. № 14.
3—20

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ: Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 բ. և 1 բ. 50 կ.:

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 բ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պոստով:
29—100

Շուտով լոյս կը տեսնի

«Պանդուխտ պատանի» վերնագրով երգարանը: Գինն է՝ մինչև լոյս տեսնելը 50 կ., լոյս տեսնելուց յետոյ 70 կ.: Գումարով 30% զիջում, ճանապարհածախսով:

Լոյս տեսան

1) «Самоучитель Русскаго языка», ամենահեշտ միջոց հայերէնի օգնութեամբ սովորել ռուսերէն գրել-կարդալ եւ խօսել: Գինն է 30 կ., գումարով գնողներին 30% զիջում, ճանապարհածախսով:

2) «Այբբենարան»: Գինն է 10 կ.: 100 օրինակը 2 բ. 50 կ., ճանապարհածախսով:

Դիմել՝ Թիֆլիս, Մուխրանսկայա փ., տ. № 16, Ա. Ա. Յովհաննիսեանցին, փողը կանխիկ:
1—3

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

ԽՄԲԱԳԵՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԱՑՔԸ *սկսվում է յունվարի 7-ից 1900 թվ: Առարկաներն են՝ ա) տարրական թէօրիա, բ) սոլֆէջիո, գ) ներդաշնակութեան թէօրիա, դ) փոխադրութիւն, ե) չարադրութիւն, զ) լուծմունք, է) նուագել դաշնամուրի վրա ակկօրդներ և առանձին ձայներ, ը) խումբ կազմելու, սովորեցնելու և կառավարելու կանոններ—տեսական և գործնական: Ընթացքը—3-ից 4 ամիս: Դասերի թիւը—150: Ուսման վճարը—երեք տարի ժամանակով 300 բ., երկու տարով—200 բ. և ուսման ընթացքում—150 բ.՝ բաժանած չորս մասի:*

Разъѣздная, № 9. Тифлисъ. 3—4

ԲԺԻՇԿ Գ. Գ. ՄԵՀՐԱՒԵԱՆ

Ընդունելութիւն բերանի խոռոչի և ատամների հիւանդութիւնների: Ամենայն օր 10—2 ժամ առաւօտեան և 4—7½ ժամ երեկոյեան. իսկ կիրակի օրերը՝ 10—2 ժամ: Վերեսմինեան փողոց, տուն № 2, երկրորդ մուտքը Երևանեան հրապարակից:

(Ա. Հ. Չ.) 8—10



ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբրայերենով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը:

Պարապմունքները սկսվելու են 1900 թվի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: Գինն է 3 բ. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու: 4—20

Թիֆլիսի Այգեգործական դպրոցը

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թվի աշնան և 1900 թվի դարնանը ծախվում է նոյն այգեգործական դպրոցում, պակասեցրած գներով մօտ 4000 մէկ և երկու տարեկան ամենաընտիր տեսակների մրգեղէն ծառեր և 50,000-ից աւելի զարդածառեր, փշածառեր, մշտադալար և տերևազարդ ծառեր և թուփեր մէկ տարեկան հասակից մինչև հինգ:

(Ա. Հ. Չ.) 29—40

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

За успѣшнія занятія благодарности.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италіянская), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ января мѣсяца. 6—100

Преподов. ведется по собств. сочиненіямъ.

Годъ занятій десятый.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET Cie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտներով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 5/17 յունվարի ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, մաքը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խոջափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մուրֆեանցներին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելիխով, Հերչենբօղերին: (Ա. Հ. Չ.) 5—20

Եղբարք Ե. եւ Մ. Միրզաբէկեանցների

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՒԾԱՐԱՆ

ԲԱԳԻՈՒՄ

Ի նկատ առնելով, որ տարէց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը գնալով մեծանում է՝ մենք, որպէսզի դիւրութիւն լինենք տուած մեր մշտական գնողներին՝ վերոհիշեալ Թիֆլիսում (Հալաթարի կամուրջի մօտ, տուն Իսարլովի) բանալ սեփական խանութ, որտեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաընտիր տեսակները: Հրաւիրում ենք պ. պ. ծխողներին անձամբ հաւատիանալ մեր ծխախոտի բարձր յատկութեան:

Օտարաքաղաքացիք իրանց պատուէրներով դիմում են—Тифлисъ, Табачный магазинъ Бр. Мирзабековыхъ.

Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և շուտ: 4—10

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"

ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գօլովինսկի Պրոսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Քաշուէմի սուրբ Գէորգ եկեղեցու:

Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային սեզօնի համար՝

Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ:

Ստացված է նոյնպէս **ՖՕՐՄԷՆՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ**.— զատաստանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և բէալական ուսումնարանների:

Ունենալով մեծ քանակութեամբ մատէրիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ: Գները ՎԵՐԶՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ էժան:

Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրի ½ մասը: 32—40

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Декабря 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.